

Ծայր նենգութեան՝ բրել կամեցաւ, առ ի խար-
դաւանել զմեզ գահալիժաբար: Բայց մինչ յետս
(ըստ որում յաճախ պատահի նենգողաց) ընուլ
կամէր զնա անձամբն, վասն կարծ գողոյ հասակին
ոչ բաւականացաւ ի ընուլ: Քանզի քան զգլուխ
իւր բարձրացաւ բազմաւ կանգնաւ: Սակայն ցաւիմ
եւ զայնպիսեաց փառաց, զի բաց ի սեւերեսու-
թեանց զայլ իմն ինչ ոչ կարեն արդիւնաւորիլ,
որ եւ ահա զարդիւնս վաստակոց իւրեանց (թարց
վրէժխնդիր լինելոյ իմ) վայելելով վայելեցին: Եւ
չէր արժան վրէժխնդիր լինել, զի բարերարք գտա-
նեցան ինձ՝ չարերարելով իւրեանց, եւ ինքեանք
յորմէ զգուշանայինն՝ այնմ պատահեցան «Որո-
գայթօք նոցա փշրեցան եւ մեք:»

Բայց ի բաց թողով զանպիտոյս վէպս,
զպիտանաւորս զգացուցից Տեառնդ: Քանզի Սրբա-
զան Քահանայապետն վերադառնալով Տերամբ ի
Յունիսի 7 ի քաղաքս զՀնգեսին յատկացուցեալ
զերանեցեալս սրբացուցանելոց է ուրոյն ուրոյն
փառաւորութեամբ մեծաւ: Որոց զհաւաստի պատ-
մութեանց զտպագրութիւնն ի կողմանէ սրբոյ ժո-
ղովոյն եբեր առ իս Մօնսինեօր Սամանին, զի եւ ես
(որպէս եւ այլքն եպիսկոպոսաց) շարադրիցէի առ
իւրաքանչիւր սրբացուցանելի երանեցեալս յարմար
հինգ կերպիւ Արզուհալատեսակ համահաստա-
տութիւնս. եւ ի դէպ ժամու ընթեռնուցուի
զՀայերէնն ես, եւ զլատիններէն թարգմանութիւնն
այլք, ի մէջ մեծի հանգիսի, ի ներկայութեան
Սրբազանի Պապին, որք եւ պատրաստեցանն իսկ:

Այլ եւ խնդրի ի Հայրութենէ քումմէ, զի
եթէ դէպ ի տեղս գալոց փէլէկրին որ գտանիցի ի
տեղդ, յանձնեսցես ի նա առ ի բերել ինձ զմինչեւ
ցայժմ տպագրեցեալ տետերսն բառարանին¹. Բայց
գիտեա՛ զի մինչեւ ցքառասուն եւ ութն տետրն

¹ Որ հաջիւ 1749ին լոյս տեսաւ: